ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 19 ՄԱՐՏԻ 1880 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 19 ՄԱՐՏԻ

№ 20 ՔՍԱՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ Վ՛ՃԱՐՆ Է 1 ԿՈՊԷԿ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՏԱՐԱՔԱՂԱՔ. ԴԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ ВЪ РЕД. ГАЗЕТЫ ,,ПЧЕЛА АРМЕНИИ" Г. Тифлисъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վանի սովը.—«Մի հայեացք Ներսիսեան դպրանոցի մասին» յօդուածի առթիւ.—Գրքերի հրատարակութեան ընկերութեան անդամների մարտի 9-ի ընտրութիւնները։

Ազգային.— Թղթակցութիւնք Կ. Պօլսից, Հին—Նախիջևանից, Վ. Ագուլիսից, Ալէքսանդրօպօլից և Թիֆլիսից։

Մանր լուրեր։

Յայտարարութիւններ։

Բանասիրական. — Հայկական խնդիր։

ԹԻՖԼԻԶ 19 ՄԱՐՏԻ 1880 Թ.

Փետրվարի 22ին Վանի փոխանակագրած 1300 ռուբլին ստացվելից յետ—այնտեղից եկած հեռագիրը, մեծ. Կամսարականի ստորագրութեամբ, հետեւեալ բովանդակութիւնն ունի.

«Սովը զարգանում է սաստկութեամբ, Աղբակում 150 հոգու չափ մեռած են, հարիւրաւոր գիւղացի աղջիկներ փողոցներում ընկած են մերկ և սոված. Վանում 2—300 հիւանդ մանուկներ կան սովից, որոնց համար Խրիմեանը հիմնել է ապաստանարան։ Հարկ է օգնել այս մարդասիրական հիմնարկութեան։ Եթէ կարեւոր միջոցները գործ չդնվեն, Վասպուրականը կ՚կորչի. միայն նշանաւոր գումարները կարող կ՚լինեն նրան փրկել»։

Այս համառօտ նկարագիրը կենդանի պատկերն է Տաճկահայաստանի ներկայ վիճակին։ Մեր կողմից այսքանը միայն կարող ենք ասել, որ այդ կորնչող երկիրը տաճկահայերի ապագայ յոյսն է, նոցա ապագայ բարօրութեան և երջանկութեան աղբիւրն է, ցամաքեցաւ այս աղբիւրը—երազի պէս պիտի անցնի և նոցա յոյսը։ Կամենում չե՞ն հայերը անյոյս կորչել, թո՛ղ ուրեմն և զոհեն, ինչ որ կարող են զոհել իրանց բերանի հացը կտրելով։

Իրաւ է, այսպիսի ճգնաժամի միջոցում մեծ հոգացողութիւնը բարեկարգ կառավարութեան մասն և բաժին կ՚ընկնի, բայց տաճկական կառավարութեան դրամական և բարոյական սնանկութիւնը ներկայումս գաղտնիք չէ, ուստի և մանաւոր ազգային բարեգործութիւնն, որ երկրորդական՝ տեղը պիտի բռնէր, առաջին տեղը պիտի անցնի ի նախատինս փտթար կառավարութեան, որ գիտէ միայն ժողովուրդների աշխատանքը վայելել, բայց ոչ նրանց խնամել չարեաց ժամանակ։

Անտարակոյս Տաճկաստանի հայերը իրանց ընդհանուր ազգասէութեամբ անում են ինչ որ ձեռքերից գալիս է, ներկայումս գլխաւոր ապարէզը մնում է մեզ ռուսահայոցս։ Մեզ ժամանակ է. քանի որ հայ ազգի մեծամասնութիւնն իւր հայրենիքում սովի մէջ է, այսպիսի հանգամանքում ամեն տեսակ աւելորդ զուարճութիւն և զարդ—միայն ամօթ պիտի բերէ հային, նորա անզգայութիւնը ցոյց տալով։ Հայ երիտասարդների և օրիորդների պաճուճանքները՝ ճոխ զգեստ, ապարանջան, օղ և մատանի և այլ շատ զարդեր անուանի—նրանց յանդիմանութիւնք և սովելոց գանձարանից յափշտակութիւնք են։ Այս հայեացքը պէտք է տիրէ հայերին ներկայումս, որպէս մի պատուով ապրենք ապագայում։ Մարդասիրական զգացմունքը պէտք է լինի աստուածային օրէնք թագաւորէ հայ սրտերում։ Պէտք է տալ, ինչ որ հնարաւոր է տալ։ Մինչև ցայժմ մեր տուածը աննշան է, այն բոլորը մեր հարուստներից մէկի տուրքը պէտք է լինէր։ Սոված աշխարհ մի կարօտ է ոչ տասն հազարների, այլ հարիւր հազարների և միլիոնների։ Թո՛ղ այս յիշեն մեր հարուստներն և իրանց տուած հարիւրներն ու հազարները իրանց տալիքների փշրանքը համարեն և իրանց խիղճը մաքրեն, իրանց վայելուչ նուիրատուութեամբ։ Յայտնի է, որ ռուսահայոց մէջ բաւական կան անձինք, որոնք առանց նեղութիւն կրելու տասն և հարիւր հազարներ կարող են տալ, ո՞ւր են այսպիսիք, թո՛ղ յիշեն նոքա, որ կ՚անցնի կարճ միջոց, սովը կանցնի, մեռնողները կ՚մեռնին, բայց իրա՛նք էլ կ՚փոշմանեն, խղճահար լինելով և ազգի պատմութեան առաջ պատասխանատու մնալով։ Շտապենք ուրեմն, քանի ժամանակը մեր ձեռքումն է։

„Փորձ" ամսագրի ներկայ ամի փետրվարի տետրակում կարդացինք „Մի հայեացք Ներսիսեան դպրանոցի մասին" յօդուածը։ Պարոն յօդուածագիրը կամ տեղեակ չէ դպրոցի պատմութեան, Ներսէս կաթողիկոսի կաթողիկոսանալից յետ և կամ գիտմամբ չգիտել է ճշմարտութիւնից, ինչպէս և՛ իւր մի քանի նկատողութեանց մէջ դպրոցի վիճակը բարելաւելու և նրան աւելի արդիւնաւոր անելու մասին համեմատ կամ գիտմամբ շատ վեր ի վերոյ հայեացք է գցում։ Իսկ առհասարակ պ. յօդուածագրի հայեցուածքի մասին թէ ուսուցչական ժողովի իրաւանց և թէ ծխական դպրոցների յարաբերութեանց վերաբերութեամբ դէպի Ներսիսեան դպրոցը ոչինչ չունինք ասելու, որովհետև դոքա համառօտապէս կրկնութիւնք են այն հայեացքների, որոնք „Մեղուն" զանազան ժամանակներում բազմիցս յայտնել է։

Վերյիշեալ սխալ հայեացքների վերայ կամենում ենք մի քանի նկատողութիւնք անել։ Ընդյայտ յօդուածագիրը խօսելով դպրոցի տեսչի և ուսուցչաց ժողովի պարտականութեանց և պատասխանատուութեան ընդարձակ շրջանի և նոցա իրաւանց նեղ ասպարիզի վերայ, ասում է, որ 1859 թուականի հոգաբարձութիւնն աւելի լաւ է հասկացել տեսչի և ուսուցչաց անկախ գործունէութեան օգուտն. ուստի և տուել է տեսչին իրաւունք գործելու ըստ ուսումնական մասին անկախ զումբէք։ Երևի պարոնը չգիտէ, թէ ինչո՞ւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ամեն վիճակի իւր որոշ անունը տալ՝ լաւ է, վասն զի վիճակը այն կը պահանջէ։ Այս վիճակը հոն է, որ կամ հայ ազգութիւնը պէտք է մեռնի բոլորովին և անյիշատակ երթայ աշխարհքէս. Հայաստան կամ Արմենիա հին աշխարհագրութեանց և Սան-Ստեֆանոյի դաշանց 16-րդ յօդուածին մէջ վերջին անգամ մը միայն երևայ պատմութեանց մէջ ի նախատինս ԺԹ-րդ դարու, կամ ինքնավարութեամբ կենդանանայ և համարձակ ապրի փոքրիկ անկիւն մը ասիական աշխարհքին յանուն և յօրինակ քրիստոնէական բարեկարգութեան և քաղաքակրթութեան։

Օտարներ եկան՝ և ընդ ամեն օր կեկնեն. և զարմանք չէ, նախատել զհայութիւնը, տեսան զինք իրենց բարձրութեննէն, արհամարհեցին նորա խոնարհութիւնն ու աղքատութիւնը, զզուեցան իրեն ցնցոտիներէն, ոտնհար եղան նորա հարստահարեալ վիճակին։ Չուզեցին տեսնել թէ դարերով այդ վիճակին տանելու տոկունութիւնը՝ առաքինութիւն էր։ Եթէ ժամանակը չը քայլեր հսկայաքայլ ի փրկութիւն ներելի էր իրենց այս թեթեւութիւնը։

Ընտանիք նաև, հայկական բարձր աթոռներուն վրայէն «Հայութիւն չկայ՝ Հայաստան չկայ, մենք միայն կամք» գոչեցին ի լուր հայ ժողովրդոց և զօշաքաղ ձեռքեր իրեն կարկառեցին. Նոյնպէս վարէն՝ ցածէն եղան այնպիսիք որ «Ափսոս է ազգերնուս» ըսելով ազգը յորդորեցին գթութեան դիմել, չեմք հասկնար, ինչ վերջին զոհողութիւն իրմէ պահանջելով։ Այս յայտնի էր, թէ ինչ որ ազգանուէր պատրիարք մը կենաց և անձին առողջութեան վտանգաւ ազգին համար կը խնդրէր՝ և յանուն արդարութեան և մարդասիրութեան կը պահանջէր, ամեն քրիստոնեայ և ոչ քրիստոնեայ դուռ կը բաղխէր իւր օրինաց գրքին հնազանդելով, այդ իւր խնդիրքը կը պախարակէին և կարհամարհէին։ Ի՞նչ կուզէին և ինչ կուզեն իրենք երբ հարցնենք, որոշ պատասխան մը չեմք կրնար առնուլ. վասն զի այդ հարցին որոշ պատասխան արդի ժամանակիս մէջ ոչ թէ հայ մը, այլ անտաշ մահմետական մը հազիւ կըրնայ զրուցել համարձակ թէ «Հայք տասըն և հինգ դարերու քրիստոնէութիւնը պէտք է ուրանան, քառասուն դարերու ազգութիւնը պէտք է մոռնան եթէ կուզեն ապրիլ»։

Մահմետականութիւնը այս կը պահանջէ հայութենէ, և եթէ «Վագըթ»՝ օրագիրը ձայն օսմանեան պաշտօնէից չի զրուցեր համարձակ գործքերը յայտնի կը զրուցեն։ Այդ կառավարութեան քաղաքագիտութիւնը բաց ասաց, կերևայ թէ ուրիշ ելք չէ գտած։ Իւր բոլոր զօրութիւնը կրօնքին վրայ դնելով, յուսահատած իւր եւրոպական բոլոր երկիրներէն որ մէկիկ մէկիկ կերթան իւր ձեռքէն, յուսահատած կղզիներէն, որոնց ամենէն մահմետականը զԿիպրոս իւր ազատ կամօք տուաւ Անգղիոյ և որոյ միւս ամենքը յոյն քրիստոնեայ են, կը յուսայ փոքր—Ասիա՝ Հայաստան՝ Միջագետք՝ Ասորեստան՝ Ասորիք՝ Քիւրդիստան՝ Արաբիա և Ափրիկէի արևելեան հիւսիսային եզերքը պահել և ահագին ինքնակալութիւն մը դարձնել երևալ աշխարհի։ Իսկ լեզու ազգութիւն՝ պատմութիւն՝ աւանդութիւնք և սովորութիւնք նշանակութիւն չունի իւր աչքին։ Կրօնքն է իւր դրօշակը. և այդ բանին համար անգրագէտ չերքեզը, աւազակ քիւրդը, աւազաբնակ արաբը և ամեն թափառական կէս մահմետական ժողովուրդք կը յուսայ եթէ ոչ այսօր գոնէ ապագային մէջ օր մը խմորել և զանգուած մը չինել, իսկ քրիստոնեայ փոքրիկ ազգ մը որ պատմութիւն՝ գրականութիւն՝ լեզու՝ աւանդութիւն և հայրենի երկիր մը ունի, այս վէրք մը կը համարի այդ ահագին մարմնոյն մէջ։

Եթէ Հայաստան այդ երկիրներուն կեդրոնը լինէր թերևս իրաւունք ունենար այդ իւր տեսութիւնը, բայց Հայաստան սահման մի է իւր աշխարհագրական դիրքով երեք մեծ պետութեանց մէջ, որոց մին քրիստոնեայ և քրիստոնէութեան պաշտպանն է և մահմետականութիւնը պէտք է այդ փորձով գիտնայ և չարունակ յիշէ։ Իսկ երբ ընդհակառակն մաքիավելլական դրութեամբ մը քանուչորս տարի չարունակ կ՚աշխատի հայութիւնը ոչնչացնել այն ամեն նոր և հին օրէնքներով որ զքրիստոնեայն իւր հողային ստացուածքէն զրկեն, յուղկահարութիւնը վարեն, հարստահարութիւնը վերէն կը դրդէ և կը զայրացնէ. քրդին աւազակութեան վրայ չերքեզին յափշտակութիւնը կաշառակեր և կրօնամոլ դատաւորներով կը նուիրագործէ. աւարառութեանց վրայ հրդեհը նաև օգնութեան հասցնել չամաչեր, սպանութեանց և առևանգութեանց վրայ հեշտ աչօք կ՚ակնարկէ։ Ի՞նչ կը մնար ընել հայ ազգին, սպասել և անհետ լինել աշխարհքէս անձայն և անմըռունչ։ Եւ այս ճիշտ 1856էն վերջը երբ Եւրոպա միլիոններ կը զոհէր և քրիստոնեայ արեանց հեղեղներ կը վազցնէր մահմետական իշխանութեան երեակայեալ ամբողջութիւնը պահելու համար, և ուրու պարծեալ ասիական ամբողջութիւնը պահելու համար դաշնակ մը կնքեց Անգղիա «վերջին փորձ» անուանելով։ Եւ այդ դաշանց հաստատութենէն մինչև հիմա ո՞ գիտէ ինչչափ չենք անչէն եղան և ինչչափ գիւղեր աւերակ։

Ծածուկ է՝ այո, ազգին այս վիճակը մանաւանդ երբ ամեն հարստահարութեանց վրայ, սովն էլ կը հասնի հայրենի երկրին հաւատարիմ հայուն։ — Բայց մեզ համար, աւելի դժնդակ պէտք է համարել ազգային վիճակին համար լքումն և յուսաբեկութիւնը։

Բայց միթէ կրնայ լքանիլ հայ մը, ճշմարիտ հայ մը, սիրտ ունեցող հայ մը, երբ այն մարդը որ կաշխատի սրտով և հոգւով, կտեսնէ զնա իւր առջևէն Մովսէս որ կառաջնորդէ, ոչ անջրդին՝ ոչ անապատը՝ ոչ ամաղէկը առջև՝ ոչ փարաւոն ետևէն՝ ոչ Կարմիր ծովը որ կըրըջապատէ՝ ոչինչ իր քայլերը չեն կասեցներ, և իր ժողովրդեան կը ցնէ անդրդուելի յոյսը առ Աստուած որ իր ուղեցոյցն է. չի լսիր՝ չի տեսնիր այդ փոքրոգի անձինքը որ չուրջը կը քրթմնջեն, Կորխ՝ Դադան՝ Աբիրոն՝ և մինչև Ահարոն մեծ քահանայապետ որ կը մոռնայ իւր փրկութեան Աստուածը և ոսկի հորթին կը խնկարկէ։

Ի՞նչ ըսաւ Ներսէս պատրիարքը ժողովեան որ փրկչին ծնունդը շնորհաւորելու եկած էին իրեն. «Ես երբեք յուսահատեալ չեմ ազգին վիճակին բարելաւութեան համար, վասն զի ես ինչ որ խնդրեցի մինչև այսօր իմ ազգին համար արդարութիւն էր, ինչ որ փափաքեցայ իմ ազգին կենաց և օգտին համար՝ այն օսմանեան ինքնակալութեան կենաց և օգտին անխզելի կապն էր բարենորոգմանց, տարակոյս չունիմ որ ճշմարտութիւնը վերջապէս պիտի յաղթանակէ և նոքա որ չեն

Ներսէս կաթողիկոսի մահից յետ դպրոցի թէ տեսուչն և թէ մի քանի ուսուցիչք թողին դպրոցն — ոչ ապաքէն հէնց տեսչին այդ իրաւունքը զլանալու և հոգաբարձուաց դպրոցի ուսումնական մասի մէջ խառնվելու ցանկութեան առթիւ եղան այդ հրաժարականները, կամ գիտէ՞ արդեօք, թէ յետոյ 1859 թուականին հոգաբարձութիւնն ո՞ւմ տուեց այդ անկախ զուժկէք իրաւունքը. այնպիսի անձին, որին ոչ թէ իրաւունքըն, այլ և ոչ տեսչութեան պաշտօնը կ'վայելէր: Իսկ դպրոցի ներկայ կանոնադրութեան մէջ մտած իրաւանց և պարտականութեանց խառնափնդորութիւնը հետևանք է նորա, որ 1861-ին երկու կանոնադրութիւնք կազմվեցան և ներկայացվեցան վեհափառ. կաթողիկոսին և սրբազան սինօդն կամենալով երկուսին էլ ներհակ կուսակցութեանց եւս բաւարարութիւն տալ, երկու կանոնադրութիւններից մէկն էր ձուլել, որ և ցայսօր դպրոցի կառավարութեան համար գործ է դնվում, ուստի և հասկանալի են կանոնադրութեան թէ թերութիւնք և թէ հակասութիւնք, որոնք հոգաբարձութիւնն անձամբ կարող էր ուղղել, եթէ միայն կամենայ հրաժարվել կամայ ըստ ուսումնական մասին մի քանի իրաւունքներից, որ նա չէ կարող գործադրել, թոյլ տալով նոցա գործադրութիւնը ուսուցչաց ժողովին, լոկ հաշուեպահանջութեան իրաւունքն իրան վերապահելով:

Իսկ պ. յօդուածագրի պահանջը տեսչի իրաւանց մասին, մեր կարծիքով չափազանցութեան է հասցրած: Սէր, համակրութիւն և գիտակցական գործակցութիւն կարող է տեղի ունենալ աւելի ազատութիւն և հաւասարութիւն վայելող գործողների մէջ — ուստի և սխալ է յօդուածագրի այն կարծիքը, թէ տեսչին պէտք է տալ լիակատար իրաւունք դպրոցի մէջ, մինչև անգամ ուսուցիչներ ընտրելու և արձակելու: Այսպիսի դէպքում կ'լինի միայն մի անսահման միապետ — տեսուչ դպրոցի մէջ և սորա գործունէութիւնն, և ոչ գիտակցաբար գործող մի խմբի գործունէութիւնը: Մենք ընդհակառակը կարծում ենք, որ նոյն իսկ տեսչի ընտրութեան պէտք է մասնակցի հոգաբարձութեան հետ և՛ ուսուցչաց ժողովը, ինչպէս և իւրաքանչիւր ուսուցչի ընտրութեան եւս: Իսկ տեսուչին աւելի ընդարձակ իրաւունքներ կարելի էր տալ դպրոցի մէջ կարգապահութեան վերաբերութեամբ: Մենք պատճառ ունինք այսպէս մտածելու:

Օտարներն ունին ուսուցչական դպրոցներ և ճեմարաններ, ուր պատրաստվում են նոցա դպրոցների համար կարևոր ուսուցիչներն իրանց ուղղութեան և շահերին համեմատ: Ցետոյ դոքա շատ տարիներ ուսուցչութիւն անելից, փորձվելից և վարչական յարմարութիւն ցոյց տալից յետ նշանակվում են տեսուչ կամ կառավարիչ որ և է դպրոցի սահմանափակված կանոնադրութեամբ: Մեր մէջ ամենևին այսպէս չէ: Մեր տեսչացուները պատրաստվում են մէկը գերմանական դպրոցի համար, միւսը Ֆրանսիականի, երրորդը ռուսականի և այլն, որովհետև մենք չունինք մեր սեփական քուրաները. և ա՛հա մեր հոգաբարձութիւնները այդ ամենևին հայ դպրոցների համար չպատրաստված և մինչև անգամ բազմիցս բոլորովին անփորձ և անյարմար անձինքներից ընտրում է իւր տեսուչներին: Ինչպէս կարելի է այսպիսիներին լիակատար իշխանութիւն տալ մի դպրոցի մէջ, սորա բաղդը բոլորովին նրան յանձնելով: Մեզ շատ ցանկալի կ'լինէր, որ մենք ունենայինք այնպիսի նախապատրաստած անձինք, որոնց վստահութեամբ կարող լինէինք յանձնել մեր դպրոցների ղեկը բոլորովին. բայց այդ բաղդը մենք դեռ չունինք մեր ներկայ դիրքով:

Սխալ է պ. յօդուածագրի և՛ այն կարծիքը, թէ հայ ընտանիքը գործակցում է հայ դպրոցին աղջկանց դաստիարակութեան գործում, իսկ տղայոց վերաբերութեամբ նա անտարբեր է մնում: Այստեղ դեր խաղացողը ոչ թէ հայ ընտանիքի իւր պարտքը հասկանալն է աղջկանց կրթութեան վերաբերութեամբ, այլ իգական սեռի փակ վիճակն, որ աղջկանց հեռու է պահում փողոցային վատթար և փչացնող կեանքից, ուստի և նոքա փակված լինելով աւելի մաքուր են մնում և վարքով և բարքով: Ուստի և համեմատութիւնը Գայիանեան դպրոցի արդիւնաւոր և Ներսիսեան դպրոցի համեմատաբար ապարդիւն գործունէութեան մասին ճիշդ չէ, որովհետև հիմքը սխալ է առած: Իսկ պատճառն այդ տարբերութեան որոնելու է մի տեղ ուսուցչական և վարչական խմբի ընդարձակ իրաւունքների և գիտակցաբար գործունէութեան և միւս տեղում սահմանափակ և մեքենայական գործունէութեան մէջ:

Մեզ զարմացնում է այն հանգամանքն, որ մեր ներկայ գրականութեան մէջ հանդէս են տեսնում համակրական յօդուածներ դէպի ժողովրդական ընտրութեամբ կազմուած և ապարդիւն հոգաբարձութիւն և անսահման իրաւամբ տեսչութիւն, որ բոլորովին անյարմար է մեր դպրոցներին ներկայ հանգամանքներում:

Ինչպէս յիշել ենք „Մեղուի" մէջ ամսոյս 9 ին եղան պաշտօնական անձանց ընտրութիւնքը «Թիֆլիզի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» համար: Գործը նոր էր և առաջին նիստն էր ընկերութեան, ուստի և տեղի ունեցան ընտրութեանց ժամանակ մի քանի անկանոնութիւնք, բայց դոքա էական վնաս չեն կարող բերել գործին: Այս անկանոնութեանց մէկն էլ էր այն, որ քուէարկութեան մասնակցեցան և այնպիսի անձինք, որոնք գուցէ ապագայ ընկերութեան անդամ չլինին, չվճարելով տարեկան վճարքը. բայց այսպիսեաց թիւն անշուշտ շատ քիչ էր և նոցա մասնակցութիւնը քուէարկութեան առանձին ազդեցութիւն չէր կարող ունենալ ընտրելիների քուէների բազմութեան կամ նուազութեան վերայ: Աչքի առաջ ունենալու է և այն, որ առանձին պահանջ անել էլ այդ մասին դժուար թէ գտանվի, որովհետև ընտրվել ցանկացողաց թիւն էլ մեծ չէր կարող լինել: Պարզ է, որ առաջ պէտք է ընկերութեան անդամների ցուցակը կազմվէր և յետոյ ընտրութիւնքը լինէին: Նորակազմ ընկերութեան և ընտրված անձանց յարմարութեան և անյարմարութեան մասին առ այժմ չենք ներել մեզ խօսել, նա մանաւանդ քննադատական հայեացքով, մինչև նոցա գործունէութիւնը չտեսնենք, մինչև նոքա իրօք ցոյց չտան իրանց յարմարութիւնն և անյարմարութիւնն, որ անշուշտ կ'երևի, թէ նոցա նիստերի արձանագրութիւններից, որ պիտի հրատարակվին և թէ գործունէութեան արդիւնքից: Թէև ընտրված անձինքների մեծամասնութիւնը ազդում են վստահութիւն ընկերութեան յաջող գործունէութեան մասին, միայն չէ կարելի չնկատել, որ ամսի 9-ի ընդհանուր ժողովն աւելի զգուշութեամբ և հեռատեսութեամբ կարող էր անել իւր ընտրութիւնն, չափազանց թարմ և տկար ոյժերի վերայ էլ, սկզբունքի համար, ինչպէս սովորաբար ասվում է, ծանր բեռը չբարձելով, և ժողովների նըշանակութիւնը աւելի բարձր պահել ընտրութեանց մէջ խիստ լինելով: Իրաւ է այդպիսի ոյժերը փոքրամասնութիւն են կազմում և չեն կարող ժողովների գործունէութեան խոչընդոտ լինել, բայց և ոչ կարող են օգնել նրան, իրանց թոյլ ուժով: Իսկ մեր կարծիքով երբէք ձեռ և սկզբունքի համար անձինք չպէտք է ընտրել, երբ դոքա այդ սկզբունքն իրագործել կամ գոնէ ոբրագործել չեն կարող հասարակաց աչքում իրանց արդիւնաւոր գործունէութեամբ: Այսպէս և գործը միայն վնաս կ'կրէ և սկզբունքն իւր վարկը կ'կորցնէ ապագայում ժողովրդի աչքում:

Ցանկանում ենք ընտրվածներին կատարեալ յաջողութիւն և տևուն գործունէութիւն:

ԱԶԳԱՅԻՆ

Կ. ՊՕԼԻՍ

17 փետրվարի

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Խմբագիր տէր.

Ըստ պարտականութեանց զոր ունի առաջի ձեր սովելոց խնամատու կեդր. մասնաժողովս, կը փութայ ձեզ ծանուցանել թէ, Հայաստանի սովատանջ գաւառաց, այսինքն Վանայ, Ալաշկերտի, Պայազիտի և Տիգրանակերտի և այլն, վիճակն առաւել քան զառաջինն նսեմ կերպարան մի զգեցած է:

Հեռագիրք, որոց ճանապարհն այժմ ձրիաբար բացեալ է կեդր. մասնաժողովս, որպէս սորա գործակից մարմնոյ ի Տաճկաստան, խորին տրտմութիւն կը սփռեն յոգիս, համառօտաբան՝ սակայն ազդու իրերաց նկարագրովք սովեալ աշխարհաց:

Քսան և չորս փետրվար ամսաթուով հեռագիր մը ի Վանայ յիսուն և երկու մահուան ի սովոյ մեզ կը նշանակէ որ ըստ աշխարհագիտաց յիսուն և երկու հազար մահուց հաւասար են, քանզի սովոյ արբանեակը, ախտք բիւրաւեակը, համբերապատիկ առաւել յետ դադարման սովոյ, կը հնձեն քան սոյն ինքնին ի ժամ իւր յասման:

« տեսներ այսօր՝ վաղը քողը կընկնի ի- « րենց աչքերէն և կը ճանչեն թէ հայ « ազգը իր փրկութիւնը խնդրելով օսմա- « նեան պետութեան փրկութիւնը նաև « կը տեսնէր»:

Ո՞վ աւելի հաւատարիմ հպատակ է սուլթանին և ով աւելի իրաւունք ունի, այս խօսքերը զրուցող հայոց պատրիարքը, եթէ այն չահասէր փաշաները որ ամեն բարի խորհուրդները արհամարհեցին, քսան և չորս երկար տարիներ սպաննեցին, ոսկւոյ միլիոններ հալեցուցին՝ անհետ ըրին, երկիրը անապատ դարձուցին երբ լաւ մատակարարութեամբ դրախտ կրնային ընել, և հիմա այս վիճակիս մէջ դարձեալ նոյն ճամբան կուզեն շարունակել յամառութեամբ: Ի՞նչու չեն լսեր այդ Անգլիոյ դեսպանին նաև, որ անգղիացի՝ բնական է թէ իւր ազգը և նորա շահերը կը սիրէ, բայց աշխարհք գիտէ և իւր անցեալը կը վկայէ թէ իւր ազգին սիրոյն յետոյ սրտին մէջ Թուրքը և Թրքական օգուտը առաջին տեղին ունի: Եւ ինչ զարմանք, որ այպիսի տկարամիտ՝ տգէտ կամ չահասէր մարդիկ որ պետութեան կառավարիչքն են, որ իրենց ձայն ունին «Վագըթ» օրագրի խմբագրութիւնը, որ չեն գիտեր զանազանել կրօնամոլութիւնը՝ կրօնասիրութենէ, կառավարութիւնը՝ բռնաւորութենէ, մատակարարութիւնը՝ յափշտակութենէ, զինւորութիւնը՝ աւազակութենէ, որ ամեն օր ատեան կը կազմեն ելեմտական անել վիճակէն ելք՝ ճար՝ դարման ստեղծելու համար, և ծանրատոկոս փոխառնութիւններէ զատ ուրիշ հնարք չեն գտներ, որ կործանմանքէ ի կործանմանք դիմել միայն կը նշանակէ. այժ ինչ զարմանք եթէ չեն կրնար հասկնալ հայ ազգին և նորա պատրիարքին ոչ խօսքերը և ոչ ձգտմունքը: Այս նախապաշարեալ գլուխներուն խելքը ներկայիս մէջ պէտք չէ փնտռել, այլ գտնելու համար պէտք է դարերով ետ երթալ, վասն զի անցեալին երազներուն մէջն են իրենք, ոչ ներկայն կը տեսնեն և ոչ ժամանակիս ոգին կը հասկնան:

Վայ է ժողովրդոց, որ այդպիսի ողորմելի գլխոց կառավարութեան են դատապարտեալ, որ մեծամեծ հարուածներ և արկածներ նաև չեն կարող բժշկել յամառ կուրութենէ և չեն տեսներ: Դեռ երեկ էր որ ռուսաց զօրքը Սան Ստեփանոյի չուրջը Պօլսոյ դռներուն առաջ կը բանակէր, օսմանցի մեծ իշխանաւոր մը իւր պալատին մէջ շրջապատեալ իւր քանի մը բարեկամներէն կամ լաւ ևս իւր չողոքորթներէն, այդ պատերազմին անյաջող ելից վրայ կը խորհրդածէին, և մէկը գիտ մը իբրև թէ ըրած ըսաւ, «ափսոս մենք պէտք էր հինգ հարիւր հազար զօրք ունենայինք»:— «Ցիմար, պատասխանեց իշխանաւորը, ես լաւ գիտեմ որ չորս հարիւր յիսուն հազար զօրք ունէինք ոտքի վրայ, ուրեմն ուրիշ բան մը մեզի կը պակսէր, և ես այդ կը փնտռեմ»: Եւ ճշմարիտ է որ այդ մարդը գիտէր, վասն զի պատերազմը կարգադրողներուն մէկն էր, իսկ հիմա որ իւր բարեկամները յաջողեցան զինք սահեցնել և հեռացնել կարծեն թէ գտած են այդ բանը, քիւրդին՝ չերքեզին՝ և կառավարութեան պաշտօնէին սանձը համարձակ թողլով, մանաւանդ թէ նոցա աւազակութեանց յորդոր լինելով: Բայց այդ քիւրդը՝ այդ չերքեզը նաև գիտէք զով կ'ամբաստանեն, հազարաւորներու և բիւրաւորներու մէջ յանկարծ խղճմտանք մը երբ գտնուի: Լսեցէք և դատեցէք:

Ասկից եօթն՝ ութն ամիս առաջ Նիկոմիդիոյ կողմերը Ատաբազարի հայ՝ թուրք և յոյն բնակիչք կրկին և կրկին աղերսագիր մատուցին սուլթանի կառավարութեան և Անգլիոյ դեսպանին, չերքեզ գաղթականաց ամենօրեայ զրկանքներէն՝ աւազակութեան և մարդասպանութեանց դէմ, իմացնելով թէ անկարելի էր եղած իրենց քաղաքէ և գիւղէ դուրս ելնել և հեռանալ այս անզգամներուն ձեռքէն: Վերջապէս կառավարութիւնը որ Բարձրագոյն Դուռ կանուանի այս վիճակիս դարման քննիչ «քօմիսիա» մը յուղարկեց բարձր աստիճանաւոր անձ մը որ Ատաբազարի կառավարութեան պալատը ժողվել տալով ամեն պաշտօնեայ և զանազան ժողովրդոց գլխաւորներ և նոյն չերքեզներու պէյեր և երեւելիներ, հոն աղքայական հրովարտակը, և ժողովրդեան աղերսագիրներ կարդալ տալէն վերջը, ըստ կարգի և խիստ յանդիմանութիւն մը ըրաւ այդ ներկայ չերքեզներու, և ինք նաև կերևայ թէ հաւանելով իւր ատենաբանութեան վերջացուց գոհութեամբ իւր խօսքը հարցնելով յաղթութեամբ թէ ինչ պատասխան ունէին տալու այդ ամեն ամբաստանութեանց: Եւ ահա այդ չերքեզներու մէջ պատկառելի ալեօր պէյ մը կանգնեցաւ և գրեթէ այսպէս պատասխանեց:— «Մենք մեր լեռները երբ « թողինք, անհաւատի լուծին չուզեցինք « մեր վիզերը յանձն առնել, և մահմե- « տական մեծ ինքնակալութեան ներքև « եկանք մտանք կամովին՝ գաղթակա- « նութեան ամեն նեղութեանց զմեզ են- « թարկելով, կարծեցինք թէ հոս կրօ- « նից արդարութիւն կը թագաւորէ, և « մեր զաւակները գեղեցիկ կրթութիւն « մը կառնուն և առաքինի մարդ կը « լինին: Բայց մեր բոլոր յոյսերը ոչինչ « դարձան, ոչ միայն մեր տղայոց լեռ- « նական և վայրենի պակասութիւնքը « չը վերցան այլ շատ մը նոր անզգա- « մութիւնք վրայ դիզուեցան, վասնզի « մեր տղայքը սովրեցան թէ այս երկ- « րիս մէջ կարելի և ներելի էր ամեն « բան ընել՝ ամեն չարութիւն կատարել. « միայն թէ վերջը կողոպուտը պէտք էր « դատաւորաց և իշխանաւոր պաշտօնէ- « ից հետ բաժնել որ Բարձրագոյն Դըռ- « նէն կուգային. և այսպէս ահա պէտք « էր գողնալ՝ յափշտակել՝ սպաննել նաև, « բայց միշտ մեծ ասոր՝ մեծ գումար « վերցնել որ դատաւոր և աւազակ կա- « րենար բաւականացնել»:— Եւ ծեր պէյը օրինակներ սկսաւ համրել, անունով մականունով տեղով՝ ճանապարհով ցոյց տալ, թէ ինչպէս այս ինչ չերքեզ այս ինչ գողութիւնը՝ այն ինչ աւազակութիւնը՝ այս ինչ սպանութիւնը ըրեր է և այս ինչ գումարը այս անուն և ներկայ դատաւորին՝ այս անուն և ներկայ պաշտօնէին վճարելով, ազատեր էր բանտէ և պատուհասէ և համարձակ և յայտնի կը շրջէր և իւր քաջագործութիւնքը կը շարունակէր. և այսպէս շատ մը օրինակներ տալէն վերջը աւելցուց. «Հիմա ով քօմիսէր էֆէնտի, զրուցէ մեզի թէ իմ ազգիս զաւակները մեր լեռնցի չերքէզներն են յանցաւո՞ր, թէ այդ « ձեր Դրան պաշտօնատարքը և դատա- « ւորք որ այստեղ կը համնին չքաւո- « րեալ իշխանութեամբ և դատախարա- « կութեամբ, որ մեր տգիտութիւնը « և կոշտութիւնը կը ծաղրեն քաղցր « հեզնութեամբ և քաղաքավարութեամբ, « մեր չարագործները կը յանդիմանեն « խստութեամբ թագաւորի և օրինաց « արդարութեան անունով, և հազիւ թէ « քանի մը օր անցնելով կը մոռնան և « և կը վաճառեն օրէնք և թագաւոր և « արդարութիւն փոխանակ արինաչա- « ղաղ ոսկւոյ»:

(Կը շարունակուի)

Կը խնդրեմք, ապա՛, տէր, ըստ ահագնութեան այս հարուածոյն վաղտուք բանիցդ հասանաց և սրտիդ տրոփմանցդ տրտմութեամբ ի շարժ գթութ և զկարեկցութիւն քաղաքացիդ հանիցէք. մինչ յամենայն դասըս ժողովրդեան և ի դաս կանանց անգամ, որոց երկու մասնախումբք այսօր՝ բաղկացեալ յայլակրօն ի հայոց տիկնանց զօժանդակութիւնս իւրեանց եկին մեզ մատուցանել:

Այս առթիւ կը յանձնարարեմք ձեզ խաբանել հանել յաշխարհիդ, սովելոց նուիրատուութեան ուղղակի ձևն, զի կեդր. մասնաժողովս միայն կարէ իւր ընդհանուր տեղեկութեամբն հաւասարաբար բաժանել յանուն սովելոց հայոց հասեալ նուէրներն:

Ընդունեցէք մեր խորին յանգանքներն ի դիմաց սովելոց կեդր. մասնաժողովոյ

Ատենադպիր — Ատենապետ

Պօղոս Թ. Շաշեանց — Սերովբէ Կիւլլենեան

ՀԻՆ—ՆԱԽԻՋԵՒԱՆ

20 փետրվարի.

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Ոչինչ բան չէ նկատվում այստեղ այնքան ազդու կերպով որքան հացի կարօտութիւն, ոչինչի վերա չէ խօսում ու մտածում այստեղի թէ մեծը և թէ փոքրը, բացի հացի և նորա անլսելի թանկութեան վրա:

Երեք ամիս էր որ ալիւրը ծախվում էր 3 րուբլով, իսկ այս վերջին շաբաթներումն յանկարծ բարձրացաւ մինչև 5 ր. և օր օրէ բարձրանալու վրա է:

Վերջապէս այցելութեան եկաւ և մեզ մեր նահանգի փոխ—նահանգապետը:

Նորին գերազանցութիւնը յաստատում է, որ ճանապարհին մեծ քանակութեամբ հաց է գալիս ժողովրդի համար՝ և բացի այդ Պարսկաստանի սահմանից նոյնպէս մեծ քանակութեամբ հաց է անցնելու և ուրեմն մինչև երեք օր պէտք է սպասել և տանել մի կերպով:

Առաջուց ուղարկած փողը (10,000 ր.) երեք մասի վրա բաժանեցին՝ երկու մասը Թուրք և մի մասը հայ աղքատներին տալով: 125 գերդաստան հայեր ստացան երեք հազար և երեք հարիւր րուբլին. միայն թէ դժուարութիւնն այս է, որ ալիւր և ցորեն չկայ գնելու. սաստիկ ցրտերը ջաղացները սառելեն: Ու ալիւր ու հաց ունեցողները լսելով փողի ձայնը աւելի անգթացան, ու երեք րուբլին շինեցին հինգ:

Մնաց 2040 փութ ցորենը (Տփխիսից ղրկուած). այդ էլ մի խոստումնեղումն է պահած: Այդ խոստացած ցորենն էլ գուցէ յունիսին չորանալով պէտք գայ:

Մնաց տեղական վաճառականների նպաստը: Հայ վաճառականներս էլ օրինակ առնելով Թուրքերից հանգանակեցինք 500 րուբլի չափ. ու 2,50 կոպէկով փ. ցորեն գնելով գերազնիւ խմայիլ խանից բաժանեցինք մի քանի ամենաթշուառ ընտանիքներին: Այս մի առ ժամանակեայ նպաստ դարձաւ, տեսնենք յետոյ:

Վերջին օրերումս «Тиф. Вѣст.»-ի խմբագրութիւնը ուղարկեց մեր հաշտարար դատաւորի և չորս հոգացող անձանց վրա 1207 րուբլի և 50 կ որով պիտի հոգան կարօտեալների վիճակը:

Հոգացող անձինքը զգուշանալով փող բաժանելու վատ հետևանքից աշխատում են զանազան անձինքներից ցորեն ձեռք բերել և բաժանել: Լսեցի որ ազնիւ երիտասարդ պ. Շախտախտինսկին (Թուրք) ընծայում է այս մասին 50 փութ ցորեն—նմանապէս և գերազնիւ Գալբալի խանը, որից 250 կոպէկով ցորեն ստանալու միջով հետագրել էին Տփխիս, ընծայել է 50 փութ՝ և ուրեմն եթէ այսպէս այլ ունեցողները ևս փարվին և ունեցածը վաճառեն, մեր ժողովուրդը փրկուած կ՚լինի: Լսեցի որ հայ երիտասարդ ոմանք և յաջորդը հանգանակութիւն են կազմում վ.անի սովեալներին օգնելու:

Մէ Վ.....

Վ.-ԱԳՈՒԼԻՍ

21 փետրվարի

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Փառք Աստուծոյ, ցրտերիցը կարծես թէ մի քիչ ազատվեցանք (գոնեա այդպէս է երևում), բայց տեսնենք թանգութիւնից երբ ենք ազատվում: Թանգութիւնը արդէն անտանելի է, ցորենի փութը 4 ռուբլու է հասել: Ագուլեցին ամեն կողմից յոյսը դրել է իւր եաննիի վրայ, նա մեծ ջերմեռանդութեամբ ձգում է աղքատաց գանձարանի մէջ իւր առատ լուման: Ճշմարիտ է թէև հարուստների ոմանք խոչընդոտ են լինում բարեգործական գործի յառաջադիմութեան և շատ ջերմեռանդների սիրտ են վիրաւորում, թուլացնում, բայց այդպիսիները բացառութիւն են կազմում և ինչպէս միշտ միայն իրանց խայտառակում. . .

Աղքատներին օգնող մասնաժողովը անխոնջ աշխատում է և ինչպէս արդէն երևում է խոհեմութեամբ է տանում իւր գործը և անտարակոյս մինչև վերջն էլ նոյնութեամբ կը տանէ:

Միակ բանը որ ուշադրութեան արժանի է մնացում, այդ մեր տիկինների բարեգործութիւնը, կամ եթէ թոյլ կը տաք ինձ՝ այսպէս ասել, եղբայրսիրութիւնն է, այո՛, եղբայրասիրութիւն, այս բառի բուն նշանակութեամբ: Ագուլիսի տիկինների մէջ մի գեղեցիկ միտք, կամ այսպէս ասել, մի բարի նախանձ*) ծնեց, —այն է աղքատներին օգնելու գործում յետ չը մնալ իւրեանց ամուսիններից, տրական սեռից: Իսկոյն ստորագրութեան թերթ շինեցին և յանձնեցին մի տիկնոջ և մի պարոնի, որ նոքա տները մանգալով փող ժողովեն և վերջացնելուց յետոյ, որքան որ ես լսում եմ, յանձնեն մասնաժողովի անդամներին: Շատ հետաքրքիր բան է տեսնել այդ երկու ընտրվածներին, որ դանէ դուռը ընկած, սորան նորան խնդրելով, համոզելով փող են ստորագրել տալիս և ոչ ինչ ջանք չեն խնայում ցոյց տալ միամիտ տիկինների առաջ իւրեանց ճարտարամտութիւնը . . .

Ստորագրութիւնը, ինչպէս ինձ ասացին, արդէն 500 ռուբլու է հասել, սա իսկապէս մի զարմանալի և տարօրինակ բան է Ագուլիսում. ուրա՜խ կեցցեն մեր տիկնայքը, նոցա հետ միասին և այդ ընտրուած անդամները, թո՛ղ նոքա (վերջինները) ընդունեն իմ խորին սրտի շնորհակալութիւնը ընդ նմին և իմ զայրոյթը (ներեցէք համարձակութեանս), որ նոքա իբրև Ագուլիսի առաջաւոր անդամներ, և նոյնպէս իբրև իշխանաց դասին պատկանող անձինք, չեն ստորագրել 100ական, կամ աւելի գումար, որ միւս տիկիններն ևս նոցա բարի օրինակին հետևէին, նա մանաւանդ, ինչպէս իրանք էլ վկայում են, որ ագուլեցին առհասարակ թէ կին, թէ մարդ միշտ սիրում է նայել իւր ընկերին,—եթէ շատ է ստորագրվել, շատ է ստորագրվում, իսկ եթէ քիչ—քիչ, որովհետև ինչպէս վերև յիշեցի «եսը» մեզանում մեծ դեր են խաղում:

Ինչ և իցէ, թէ այսպէս և թէ այնպէս շատ գովելի է մեր տիկինների գործը և շատ հազուագիւտ, միայն մեծ երանութիւն կը լինէր մեզ համար, եթէ նոքա ամեն գործում էլ արհամարհելով, ոտնակոխ անելով նախապաշարմունքը այդպէս սէր, համակրութիւն և եռանդ ցոյց տային, ամեն մի ազգօգուտ գործում էլ յաղթող ախոյեան հանդիսանային:

Ցեղոյ—...

*) Սև նախանձը ագուլեցու ամենագլխաւոր յատկանիշն է, «ինչու նա գնեց, ես չը գնեմ, ես նրանից աղքատ եմ», և այլ այսպիսի բաներ շատ կը լսէք ագուլեցիներից, բայց երանի թէ դէն ղըցէին իրանց տան քանդող «եսը»ները միշտ բարի նախանձով վառուէին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

2 մարտի

(Թղթակցութիւն „ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ" Լրագրի)

Ներկայ տարւոյս սկզբից Ալեքսանդրապոլում պատահել են մի քանի նշանաւոր անցքեր, որոնց մասին յարգելի խմբագրութիւնդ թէև ստացել է տեղեկութիւններ, բայց նոքա կցկտուր լինելով, ես կարծում եմ, չէք արհամարհիլ առաւել մանրամասն նկարագրութիւն. Առ այժմ ներկայացումների մասին.

Մինչև նամակիս գրելը ուսուցչական խումբը մի քանի այլ անձինքների մասնակցութեամբ ունեցել է երեք ներկայացում. Առաջինն էր «Սէր և նախապաշարմունք» պիէսան, որի մասին մի յօդուած լոյս տեսաւ լրագրիդ մէջ, այն ինչ միւս երկուսի մասին մինչև այսօր չէ գրուած ոչինչ. Նոքա են «Կողոպտած փօշտա» և «Սամէլ»: Առաջինը տեղի ունեցաւ յունվարի 26ին, իսկ երկրորդը փետրվարի 29ին. Կողոպտած փօշտը ներկայացուեցաւ մեզանում երկրորդ անգամ և համարեա միևնոյն խաղացողների ձեռքով, ինչպէս և անցեալ տարի. Այս անգամ ներկայացումը նոյնպէս անցաւ շատ յաջողակ և իւր կենդանութեամբ, էֆեկտով և խաղացողների ընդունակութեամբ լաւ ազդեցութիւն գործեց հանդիսականների վերայ.

Սակայն պէտք է նկատել, որ մեր ժողովուրդը թէև այցելում է մեր ներկայացումները և բաւականին մեծաքանակ բազմութեամբ, բայց այնու ամենայնիւ նա առանձին եռանդով յաճախում է տեսնել բեմի վերայ մեր անցեալ պատմութեան պատկերը, մեր նախահայրերի կեանքը. Այդ երևոյթը ապացուցուած է իրողապէս շատ անգամ, գոնէ Ալեքսանդրապոլի վերաբերութեամբ. Ասածիս ապացոյց է վերջին ներկայացումը, Սամէլը, որ թէպէտ կրկնուած էր միքանի անգամ առաջին տարիներում, սակայն այս անգամ ևս, փետրվարի 29ին, ըլժընդակ ցուրտը, ձիւնախառն բուքը, բարեկենդանների ընտանեկան ուրախութիւնը չկարողացան արգելք լինել այցելուներին և 182 տոմսակ աւելի քան 300 ռուբլի արժողութեամբ՝ համարեա մի օրում ոչ միայն բոլորովին ծախուեցան, այլ և ցանկացողների թիւը այնքան շատ էր, որ խումբը հարկադրուած էր ներս առնելու մօտ 30 հոգի առանց տոմսակի.

Նախ քան Սամէլի ներկայացման մասին խօսելը՝ ես կամենում եմ յիշել այստեղ, որ Ալեքսանդրապոլի թատերասիրաց խումբը հին կեանքից ներկայացումների համար ունէր դեռ ևս 1870 թուականներից կամ աւելի առաջուց մնացած պատմական հանդերձներ, սաղաւարտներ, զրահներ և այլն, որոնք իւրեանց հնութեամբ և անախորժ ձևերով համապատասխան չէին այժմեան պահանջներին. Վասն որոյ հարկը ստիպում էր այդ բոլոր իրեղէնները նորից պատրաստել, աւելացնելով նոցա վերայ և նոր տեսարանների նկարելը. Այդ իրեղէնները կարճ միջոցում պատրաստելու մէջ առանձին եռանդ և աշխատանք ցոյց տալու համար արժանի են խմբի հրապարակական շնորհակալութեան հայր Մինաս Տէր-Պետրոսեանցը, եղբարք Ցարութիւն և Աղեքսանդր Տէր-Սարգսեանք և մանաւանդ Արղութեան օրիորդաց դպրոցի վարժուհիները.

Այժմ ներկայացման մասին.

Սամէլ անունով ողբերգութիւնը, ինչպէս յայտնի է, պատկանում է Սրապիոն Հէքիմեանի գրչին. սակայն հարկաւոր է խոստովանուիլ, որ այդ ողբերգութիւնը Ալեքսանդրապոլում՝ ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ ենթարկուած է մեծամեծ փոփոխութեանց. Ցայտնի է, որ մեր պատմական ողբերգութիւնները ըստ մեծի մասին նշանաւոր են կանանց բացակայութեամբ նրանց մէջ, այն ինչ նոցա մասնակցութիւնը մի առանձին կենդանութիւն և չքնաղութիւն է տալի պիէսային. Այս հանգամանքը նըկատի ունենալով խումբը այս անգամ կարևոր էր համարել ստեղծել պիէսայի մէջ երեք կանանց դեր՝ Սամէլի մօր, քրոջ և նշանածի.

Կանանց դերերը կատարում էին տիկին Աշխէն Տէր-Սարգսեանց (Սամէլի մայրը), օր. Կատարինէ Բեանդուրեանը (Սամէլի նշանածը) և օր. Ցուրիթ Մուշեղեանը (Սամէլի քոյրը). Առաջին երկուսը արդէն երկրորդ տարին է, որ ծանօթ են մեր բեմին, այն ինչ վերջինը առաջին անգամ դուրս եկաւ հանդէս. Երեքն ևս առանձին ընդունակութեամբ այնքան գեղեցիկ կատարեցին իւրեանց դերերը, որ բազմաթիւ հանդիսականները լիովին գոհ մնալով նրանց խաղով միքանի անգամ խուռն ծափահարութեամբ դուրս կանչեցին նոցա. Բեմի յաջողութեան համար էլ հէնց այդ է հարկաւոր.

Տղամարդիկների դերերը կատարում էին պպ. Աղ. Ամիրեանց (Վահան Մամիկոնեան), Հ. Ղուկասեանց (Սամէլ). Գևորգ Տէր-Պետրոսեանց (Սմբատ Սպարապետ). Մակար Տէր-Սարգսեանց (Գաբրիէլ Ռշտունի), Գ. Բունիաթեանց (Աղջէ քրմապետ), Մկրտիչ Իսահակեանց, Աղ. Արշակունի և Յ. Տէր-Դաւթեանց. Նոքա բոլորն ևս այնքան լաւ էին իւրեանց դերերի մէջ և այնպիսի լաւ ազդեցութիւն արին հանդիսականների վերայ, որ վերջինները միահամուռ ծափահարութեամբ դուրս կանչեցին մի քանի անգամ բոլորովին միասին առանց խտրութեան.

Սամէլի հետ ներկայացուեցաւ և հանգուցեալ բժիշկ Տէր-Գրիգորեանցի «Վոյի իմ վէչէր» վօդեվիլը, որի բովանդակութիւնը մեր կեանքին բաւականին յարմար է, բայց տարաբաղդաբար Թիֆլիզի բարբառով արտասանելը բաւական դժուարութիւն է պատճառում մեր խմբին, մանաւանդ կանանց դերերի մէջ. Թէև այդպէս է. բայց այնու ամենայնիւ օր. Բեանդուրեանը (կէկէլ) օր. Ալմոյեանը (Անանի). օր. Սանոյեանը (Մաթօ), օր. Մուշեղեանը (հիւր), պպ. Մկր. Իսահակեանցը (Գէվօ) և մանաւանդ Մակար Տէր-Սարգսեանցը (Դաշօ), որ ամենայն արդարութեամբ առաջին կօմիկն է համարվում մեզանում, այնքան լաւ կատարեցին իւրեանց դերերը, որ բոլոր հանդիսականները գոհ սրտով, ուրախ հոգւով և անկեղծ շնորհակալութեամբ թողին թատրոնի դահլիճը.

Փառք և պատիւ այդ խմբին, որ չը նայելով իւրեանց բազմաթիւ զբաղմունքներին, այնուամենայնիւ չեն խնայում զոհել իւրեանց հանգստութեան միքանի ժամերը թատրոնական գործին և աղքատիկ Սահականուշեան օրիորդաց դպրոցի օգտին. Ցուսով ենք, որ ազնիւ խումբը ինչպէս մինչև այժմ, նոյնպէս և այսուհետև անխոնջ աշխատութեամբ, մի սրտով, մի հոգւով, մի եռանդով և համաձայնութեամբ յառաջ կտանի իւր գործը ի պատիւ այն հասարակութեան, որ իւր համակրութեամբ և յաճախ այցելութեամբ ոչ միայն նիւթապէս նպաստում է խմբի բարեգործական նպատակին, այլ և բարոյապէս ոգևորում է նորան.

Պարտականութիւն եմ համարում մատուցանել խորին շնորհակալութիւն նաև պ. Աբիսողոմ Յովհաննիսեանին, որ իւր անխոնջ աշխատութեամբ կառավարում է թատրոնական բոլոր պիտոյքները. Նոյնպէս և գնդապետ Պատեմնեային, որ յանձնառու է եղել հայոց իւրաքանչիւր ներկայացման ժամանակ յարմարեցնել դերասանների դէմքերը.

Իսկ ինչ կվերաբերի պ. Մկր. Տէր-Դաւթեանին, որ ահա մի քանի տարի չարունակ կատարում է յուշարարութեան պաշտօն, նա մի գիւտ է խմբի համար, որ չէ կարող չպարծենալ նորա յուշարարական ընդունակութեամբ. Շնորհակալութիւն պ. Տէր-Դաւթեանին, որ այսքան տարի չարունակ չէ խնայել իւր մասնակցութիւնը հայ բեմին.

Չէ կարելի լռութեամբ անցնել այստեղ մի ամենագլխաւոր և թատրոնական գործին նպաստող հանգամանք. Այդ սերտ կապը և փոխադարձ համակրութիւնն է հայոց և ռուսաց թատերասիրաց խմբերի մէջ. Ինչպէս մէկ, նոյնպէս և միւս խմբի համար առանձնակի դժուար էր հոգալ թատրոնական բոլոր պիտոյքները, մանաւանդ որ այդ կպահանջէր շատ մեծ ծախս, որով խմբերի բարեգործութիւնը չէր հասնիլ իւր նպատակին. Վասնորոյ, շնորհիւ Ալեքսանդրապոլի բերդապահ գեներալ մայոր Երնստի, երկու խմբերն ևս ոչ մի բոյլ

չեն խնայում միմեանց համար իւրեանց ձեռքում գտնուած թատրոնական պիտոյքները, կարասիքը, տեսարանները և այլն, որով գործին տրվումէ լիակատար յաջողութիւն։ Աստուած տայ, որ այս սերտ բարեկամութիւնը երկարատև լինի։

Ի դէպ է ասել և մի քանի խօսք մեր քաղաքի մասնող և խորհող անդամներին։ Աւելի քան 10 տարի տեղ չարունակ ներկայացումները ապացուցանում են թատրոնական գործի յաջողութիւնը և ժողովրդի համակրութիւնը։ Արդարև մօտ 10 տարի առաջ հասարակութեան նախապաշարմունքը այնքան խիստ էր, որ կանանց բեմ դուրս գալը համարվումէր անբարոյականութիւն։ Անմօրուս պատանիներին կանանց հանդերձով բեմ էին դուրս բերում Շուշանիկի դերը կատարելու։ Այժմ այդ դարը անցել է անդառնալի կերպով։ Արղութեան օրիորդաց դպրոցը ճեղքեց այդ նախապաշարմունքի քօղը, նորա մէջ աւարտած օրիորդներից ոմանք ոտնակոխ արին հին կարծիքը և ընտելացան բեմին։ Հասարակութիւնը ըստ մեծի մասին նոյնպէս ընտելացաւ այդ գաղափարին։ Այժմ շատ շատերը (ոչ առանց բացառութեան) սովորական են կարծում այդ երևոյթը։ Խօսքս նորանումն է, որ այսուհետև նախապաշարմունքները թատրոնի և նորա մէջ խաղացողների մասին առաւել ևս կանհետանան և թատրոնական գործը առաւել ևս խոր արմատ կձգի հասարակութեան մէջ։ Հասարակութիւնը կհամարի թատրոնը իւր կեանքի համար անհրաժեշտ պիտոյք։

Եթէ այս բոլորը այսպէս է այս լաւ չէր լինիլ արդեօք, որ այսուհետև կամ հասարակութիւնը, կամ նորա անդամները մտածէին կառուցանել մշտական թատրոնի շինութիւն, որից յետոյ գուցէ յառաջ գայ և մշտական խումբ թէ հայոց և թէ ռուսաց։ Բայց որպէս զի շինութիւնը աւելի արդիւնաբեր լինի կառուցանողի համար, կարելի էր յարմարեցնել նորան և քաղաքական վարչութեան, կամ այլ պիտոյքների համար և այլն։

Բ—ջէէլ—նի։

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Սոյն նամակիս հետ ձեզ կրկին հասուցանում եմ յօգուտ վանայ սովատանջներին 34 րուբլի, որ ես հանգանակել եմ մեր պատուելի ուսուցչաց (մասնաւոր գիմնազիայի Հ. Յ. Տէր-Յակովբեանցի) խմբից և աշակերտներից. խնդրեմ հասուցանէք վերոյիշեալ գումարը ուր որ հարկն է։

Ափսո՛ս որ իմ ընկերակցաց նիւթական կարողութիւնը դեռ այնքան չէ, որ նոքա կարողանային իւրեանց ուզեցածին չափ օգնել սովելոց, բայց այնուամենայնիւ շատ ուրախալի է, որ կայ նրանց մէջ ազգասիրական ոգի և կարեկցութիւն դէպի կարօտեալները։ Ուստի յուսալի է, որ նոքա ժամանակին երբ հասարակութեան անդամ կը դառնան, չեն խընայել իւրեանց ոյժերը ընդհանուր ազգի բարօրութեան և երջանկութեան համար։

Ընդ—սմին ես յայտնումեմ իմ խորին շնորհակալութիւնը պպ. նուիրատուաց, որոնք համակրեցին ինձ և չը ժխտեցին իւրեանց օգնութիւնը այսպիսի մի առաքինի գործի համար։ Ահա նուիրատուաց անունները.

Ուսուցիչք. 1. Г. Шермеревичъ 3 р 2. Р. Джадисановъ 3 р. 3. Մ. Անանեանց 3 ռ. 4. Г. Загуменный 3 р. 5. Гольдефанъ 3 р. 6. Ключаровъ 3 р. 7. А. Мансветовъ 3 р. 8. А. Тирютинъ 1. 9. Н. Соловьевъ 3 р. 10. А. Малевичъ 1 р. 11. Բէգլխանեանց 1 р. 12 Стасенько 2. 13. N. N. 1 ռ. Աշակերտք. 14. Յ. Խուդատեանց 1. ռ. 15. Ա. Բարսամեանց 1 ռ. 16. Յ. Տէր-Մերաքեանց 2 ռ.։

Ընդամենը 34 ռ.։

Յովհաննէս Տէր-Միքայէլեանց։

Թիֆլիս.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Յօգուտ ՎԱՆԱՅ սովելոց ստացաւ խմբագրութիւնս մեծ. պ. Յ. Քիւրքչեանից 5 ռ.։

* * *

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեծ. պ. Բագրատ Նալբանդեանցից ստացաւ խմբագրութիւնս յօգուտ վասպուրականի սովելոց 5 ռ.

* * *

Վաղը, հինգշաբթի, ամսոյս 20-ին հայ դերասանական մշտական խումբը կներկայացնէ յօգուտ պ. Տէր-Դաւթեանցի առաջին անգամ «Հոգեփոխութիւն կամ կախարդուած պրինց» կատ. վոդեվիլ 3 արարուածով, թարգ. պ. Կամսար Տէր-Դաւթեանցի և «Օսկան Պետրովիչը դժոխքումն» ֆարս. վոդ. մէկ արար. հեղ. պ. Գ. Սունդուկեանցի։ Յուսով ենք, որ հասարակութիւնը արժանի գնահատութիւնը կանէ նորան իւր համակրութեամբ։

* * *

Խմբագրութիւնս ստացաւ ս. Նունէի ուսումնարանի աշակերտուհիներից յօգուտ վանայ սովելոց 10 ռ. 80 կոպ.։

Ահա նուիրատուաց անունները.

1. Օրիորդք Սօֆիա և Դշխուհի Աղալեանք 5 ռ. 2. օրիորդ Շուշանիկ Տէր-Միքայէլեանց 1 ռ. 3. օրիորդ Նատալիա Քալանթարեանց 1 ռ. 4. օրիորդ Աննա Մխիթարեանց 1 ռ. 5. օր. Նունիա Տէր-Բարսեղեանց 40 կ. 6. օր. Մարիամ Դաւթեանց 40 կ. 7. օր. Նատալիա Միրզոյեանց 50 կ. 8. օր. Սօնա Միրզոյեանց 50 կ. 9. օր. Եղիսաբէթ Խօջամիրեանց 1 ռ. ընդամենը 10 ռ. 80 կ.։

* * *

ԲԱԳՈՒԻՑ պ. Այցելու մեզ գրում է. Փետրվարի, 28-ին հինգշաբթի օր, տեղիս երկսեռ դպրոցները մի ազգային արժանայիշատակ և փառաւոր հանդէս կատարեցին «Մարդասիրական ընկերութեան» նոր գեղեցկացրած դահլիճում։ Այդ հանդէսը վերաբերում էր ս. Վարդանանց տօնի յիշատակին։ Այդ օր գեր. հայր Թադէոս ա. քահանայ Բուդաղեանցը Լուսաւորիչ մայր եկեղեցում պատարագ էր մատուցանում, որին ներկայ էին երկսեռ դպրոցի տեսուչը, ուսուցիչները, աշակերտներն ու աշակերտուհիները։ Պատարագը վերջանալուն պէս ս. Վարդանանց համար հոգեհանգիստ կատարուեցաւ, որից յետոյ ուսանողները, չար ի չար կանգնած «Նորահրաշ» շարականը երգելով գնացին եկեղեցուն կից ընկ. դահլիճը, ուր պատի վերայ կախուած էր ռուսաց կայսեր մեծ պատկերը ոսկեպատ շրջանակով և նորա մօտ կարմիր մահուդով ծածկած մի սեղան որի վերայ դրած էին շրջանակներով Վարդանի և Ղևոնդ երէցի պատկերները։ Այդտեղ պ. Աւագ Գրիգորեանցը կարդաց մի գեղեցիկ ճառ այդ տօնի պատճառով և Գամառ—Քաթիպայի «Հիմի էլ լռենք» բանաստեղծութիւնը, որոնք գեղեցիկ տպաւորութիւն արին հանդիսականների վերայ։

Հանդէսին ներկայ էին, բացի երկսեռ դպրոցի տարրից, քահանաներ, տղամարդիկ և տիկնայք։ Ճառի միջոցներում աշակերտներն ու աշակերտուհիները երգում էին ազգային երգեր իրանց ուսուցիչ ձայնագրագէտ պ. Երեմիա Տէր-Յովհաննիսեանցի առաջնորդութեամբ։ Հանդէսը շատ լաւ անցաւ և հանդիսականները շնորհակալութիւն յայտնելով դպրոցների տեսուչ պ. Ստեփանեանցին, դուրս գնացին դահլիճից գոհ սրտով, տանելով իրանց հետ գեղեցիկ զգացմունքի տպաւորութիւններ։

—Մարտի 1-ին հայ թատրոնասէրների խումբը յօգուտ ՎԱՆԱՅ սովատանջների ներկայացրեց «Պէպօ» կոմեդիան և «Խոէլ քի մօզիքլութիւնը» վոդեվիլը։ «Պէպօն» շատ յաջող անցաւ, իսկ վոդեվիլը—անհամ, որովհետև դա կրկնութիւն էր։ Շնորհակալութիւն այդ գործին մասնակցողներին, մանաւանդ մեծ. տ. տ. Պօղովեանցին, Արզումանեանցին, Թումանեանցին և մեծ. պ. Խրիստափոր Անտոնեանցին, որոնք անշուշտ քանի մի սովատանջներ ազատած կը լինեն մահուհարուածից։ Կրկին դառնում եմ տ. Պօղովեանցին և յայտնում եմ իմ և իմ ընկերներիս շնորհակալութիւնը, որ նա իրա գեղեցիկ և աննման խաղով բաւականութիւն տուեց այցելուներին։

—Թագաւոր կայսեր 25 ամեայ տարեդարձը մեծ շքեղութեամբ կատարեց մեր քաղաքը։ Բոլոր եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կատարուեցան։ Տների պատշգամբները զարդարուած էին գորգերով, զանազան կտորներով, դրօշակներով և մի քանի տեղ էլ վենզելներով։ Կօլիւբէգինսկու հրապարակի վերայ մեծ բազմութիւն էր զբօսնում, ուր ածում էին տարմղի երաժիշտները և տեղական զուռնաճի։ Զուռնաճի Բացին (հայ) մեծ բազմութիւն հաւաքած գլխին, համ ածում էր, համ պարում, համ էլ ուրիշի ոսկրներն տեղից շարժում։ Երեկոյեան քաղաքը լուսաւորուած էր։

* * *

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. Աղեքսանդրապօլու հոգևոր դպրոցի ուսուցիչները նուիրել են Գարալագեազու խաչիկ գիւղի ծխական դպրոցին հետեւեալ գրեանքը.

1) Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց Սոխակ Հայաստանի Դ հատոր, Գէորգ Ռօլլէստոն և Ֆրիգօլին։

2) Մակար Տէր-Սարգսեանց տասը օր. իւր աշխատասիրած «Գեղագրութեան օրինակներ» և երկու օր. «Մանկական երգեր» Գամառ—Քաթիպայի։

3) Գեղամ Տէր-Պետրոսեանց մի օր. «Թաւամաղ մեղու» և մի օր. «Կարմիր լապտեր»։

4) Հ. Ղուկասեանց մի օր. իւր «Ընդհանուր պատմութեան» հին դարը։

5) Գաբրիէլ Յովհաննիսեանց հինգ օր. Մակար Տէր-Սարգսեանցի «Գեղագրութեան օրինակներ» և մի օր. «Ակզբնական բացատրութիւն ընութեան երևոյթների»։

Ընդամենը 24 օրինակ գիրք։ Այսպիսի նուիրատուութեան համար յիշեալ դըպրոցի հոգաբարձութիւնը հրապարակով մատուցանում է իւր խորին շնորհակալութիւնը ազնիւ նուիրատուներին։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ·
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ·

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում ծախւումէ բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանցի հետեւեալ աշխատութիւնը.

Վարակիչ հիւանդութիւններ. (Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խոլերայ, գեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ։)

Սոյն յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապահպանողական միջոցներ։

Գինն է ամենայն տեղ 50 կոպէկ.

Օտարաքաղաքացիները թող բարեհաճին դիմել վաղարշապատ բժիշկ Տէր-Գրիգորեանցին (Въ Вагаршапатъ, Доктору Тер Григорьянцъ:)

3—5

Վաճառական Գաբրիէլ Նասյեան Սալամբէգեանցը խնդրում է այն անձանց, որոնց նա պարտ է, յայտնել վեքսիլներն և վկայաթղթերը պ. Քնիկ Սուալին, երկրորդ հաշտարար բաժնում, կոնտրոլնի պալատի հանդէպ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՓՈՐՁ"

ԱՄՍԱԳԻՐ

ՓԵՏՐՈՒԱՐԻ (II) ՀԱՄԱՐԸ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. 1. Ֆիեսկօ. ողբերգութիւն. գործ Շիլլերի։ 2. Բանաստեղծութիւններ մանկանց համար. Ս. Մանդինեան։ 3. Ես նշանած էի. վէպ. Միքայէլ Վ. այելչեանի։ 4. Թալիսմ գեղ. բանաստեղծութիւն Գամառ—Քաթիպայի։ 5. Կրքերի մասին. Ա. Բաբայեան։ 6. Նիւթեր Հայաստանի վիճակագրութեան։ 7. Արարատի նկարագրութիւնը. Ա. Ամիրխանեանց։ 8. Լաւ է երբեք քան անագան. բանաստեղծութիւն Գամառ—Քաթիպայի։ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 9. Մի հայեացք Ներսիսեան դպրանոցի մասին։ ՅԱՒԵԼՈՒԱԾ 10. Հայաստան (Արարատեան նահանգ). Շըվէյցեր Լէրխենֆելդ։ 11. Կանոնադրութիւն Թիֆլիսի հայերէն գրքերի թարգմանութեան։ 12. Նամակներ խմբագրին։ 13. Ցուցակ նուիրատուութեանց յօգուտ վանայ սովելոց։ 14. Ցուցակ նուիրատուութեանց յօգուտ Դպրոցասիրաց—Արևելեան ընկերութեան։ 15. Յայտարարութիւններ։

Աստրագրուել կարելի է Տփխիսումը «Փորձի» խմբագրատանը և կեդրոնական գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով։ — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ».

Խմբագիր—հրատարակիչ
Արգար Յովհաննիսեան։

3—3

Դօկտոր Բաբայեանը ընդունում է հիւանդներ, ըստ սովորականին, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտ 9-11 ժամը. միայն բնակարանը փոխած է, պէտքէ հարցնել Բայենդուրեանի տան վերի յարկում. Սերգեեվսկի փողոց։

1—3

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Կենդրոնական գրավաճառանոցում մի գրքոյկ պ. Ա. Քոչմիշեանցի—ԳՐՕՇՕ և ԿՐՍԿԻ ՇՈՒՐՋԸ վէպերով։ Գրքոյկի գինն է երեսուն կոպ. բոլոր արդիւնքը յատկացրած է յօգուտ ՎԱՆԱՅ ՍՈՎԵԼՈՑ։

1—5

ԲԺՇԿԱՊԵՏ ԵՒ ԱՆԴԱՄՆԱՀԱՏ Գ. Ա. ՔՈՒՋԻՐԵԱՆՑԸ տեղափոխվել է Լաբօրատորնիի փողոցի վրայ, № 8, Սիմէօնովի տունը։ Հիւանդներին ընդունում է 8½—10½ ժամը առաւօտեան և 5½—7 ժամը երեկոյեան. չքաւորներին ընդունում է ձրի։

1—3

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ կովկ. գրավաճառանոցում

1, ԱԴԱՄԵԱՆ. — ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ. Տփխիս, 1880թ. գինն է 1 ռ. 25 կ. 2, ԴՕԿՏՕՐ ԲՈԿԻ — Ուսումն առողջապահութեան Տփ. 80 թ. գինն է 35 կ. 3, ՖՐԵՅԳՈՒՆ Տաւիղ Ցլնոտի 30 կ. 4, ՂՈՒԿԱՍԵԱՆՑ. —Ընդհանուր պատմութիւն Հայոց դպրոցների համար Հ. Ա. Տփխ. 80 թ գ. 80 կ. 5, ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ.— Մանկական երգեր 80 թ. անկազմ 15 կ. նոյնը կազմած 25 կ.։

1—6

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ" ամսագրի երկրորդ շրջանի հրատարակութիւնը դարձեալ յետաձգւում է մինչև յուլիս ամսի սկիզբը տարւոյս անակնկալ հանգամանքների պատճառով։

Դուրս եկաւ մամուլի տակից Դօկտոր Բոկի „ՈՒՍՈՒՄՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ" գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։ Գինն է 35 կոպ. գրքի պահեստը գտնվում է, Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 18-го МАРТА 1880 г. Типографія Амб. Энфіаджянцъ и К-о

Տպ. Բժշկապետ Մ. Ռոտինեանց.